

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2026 թվականի N 170-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, 14-րդ հոդվածի 6-րդ մասով. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2026 թվականի հոկտեմբերի 16-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ՖԱՐՖԱՐՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԶ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՍՈՒՐԻԿ ՋԱՔԵՎՈՍՅԱՆ

ՕՆԻԿ ԱԽՎԵՐԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԵՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 16
գ. Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
[illegible]
Փարաքարի համայնքապետարանում
2026 թվականի հոկտեմբերի 1[illegible]

1. «ԱՅԳԵԿ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ-Ի ԵՎ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ [illegible] ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՓԱՐԱՔԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ԹԻՎ 4/2 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԲՆԱԻՐԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿՉԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

8.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.ՎՈԼՈՂՅԱ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՄՅՈՒՍՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 0.3 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱԻՐՈՎ ԵՎ ՄՈՒՍԱԼԵՌ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2026 թվականի N 171-Ա

«ԱՅԳԵԿ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՍՏՈՒԴԻԱ» ՍՊԸ-Ի ԵՎ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Այգեկ գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի «Վարձակալությամբ անշարժ գույք տրամադրելու մասին» N 41-Ա որոշումը, «Այգեկ պարարվեստի ստուդիա» ՍՊԸ-ի տնօրեն Ռոբերտ Վաչագանի Մկրտչյանի 2026 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 5940 դիմումը և կից փաստաթղթերը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Այգեկ գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի «Վարձակալությամբ անշարժ գույք տրամադրելու մասին» N 41-Ա որոշման հիման վրա «Այգեկ պարարվեստի ստուդիա» ՍՊԸ-ի և Այգեկի գյուղապետարանի միջև 2014 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված գույքի վարձակալության պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ՖԱՐՖԱՐՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱՋ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՂԱՋԱՐՅԱՆ

ՍՈՒՐԻԿ ՋԱՔԵՎՈՍՅԱՆ

ՕՆԻԿ ԱԽՎԵՐԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԵՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 16
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2026 թվականի N 172-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՓԱՐԱՔԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի ԹԻՎ 4/2 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Փարաքարի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարիգյուղական համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի համայնքային ենթակայության հիմնարկները վերակազմակերպման արդյունքում համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու համայնքի ղեկավարի որոշումները և նրանց կանոնադրությունները հաստատելու մասին» 2010 թվականիմարտի 31-իթիվ 4/2 որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ՖԱՐՖԱՐՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱՋ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՂԱՋԱՐՅԱՆ

ՍՈՒՐԻԿ ՋԱՔԵՎՈՍՅԱՆ

ՕՆԻԿ ԱԽՎԵՐԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԵՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 16
գ. Փարաքար



Հաստատված
Արմավիրի մարզի
Փարաքարի համայնքի
2026 թվականի հոկտեմբերի [illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՓԱՐԱՔԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Փարաքարի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական առնվազն մեկ տեսակի ծրագիր և (կամ) նախադպրոցական ծառայություններ:

2.Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է (Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Ի. Գասպարյան 1 /ինդեքս՝ 1149/:

4.Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Փարաքարի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ «Փարաքարի մանկապարտեզ» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ Общественная некоммерческая организация "Детский сад Паракар" общины Паракар Армавирского область Республики Армения.

4) ռուսերեն կրճատ՝ Общественная некоммерческая организация "Детский сад Паракар ".

5)անգլերեն լրիվ՝ "Parakar kindergarten " community non-commercial organization

6) անգլերեն կրճատ՝ " Parakar Kindergarten" CNCO.

6. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատությունն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

13. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչով սահմանված արդյունքների ապահովումն է:

14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

19. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.
3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.
4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.
5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20.Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

21. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

22. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

23. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

24.Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

25. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

27. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

28. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

29. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

30. Նախադպրոցական ուսումնական հաստատություններն ըստ տեսակների լինում են՝
1) մսուր՝ 0-3 տարեկանների ընդգրկմամբ.
2) մսուր մանկապարտեզ՝ 0-6 տարեկանների ընդգրկմամբ.
3) մանկապարտեզ՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ.
4) նախակրթարան՝ 5-6 տարեկանների ընդգրկմամբ.
5) կենտրոն՝ 0-6՝ նախադպրոցական բոլոր կամ որևէ տարիքային խմբի ընդգրկմամբ:

31. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:

32. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

33. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

34. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

35. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

36. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

37. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

38. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

39. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

40. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:

41. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

42. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը (պետական և համայնքային հաստատությունների դեպքում), գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

43.Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

44. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

45. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

46.Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

47.Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

48.Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

49.Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

50. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման հնարավորությամբ լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ, նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13)պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշիչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

51. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

52. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.

5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

53. Դաստիարակը՝

1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

54. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝

1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

55. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

56. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

57.Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

58. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

59. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

60. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

61. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

62. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

63. Պետական կամ համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

64. Պետական հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

65.Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը պետական հաստատությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված, Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես հաստատությանը իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան հաստատությանը փոխանցելու համար:

66. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

67. Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

68. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

69. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

70. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

71. Պետական կամ համայնքային հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ

պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

72. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

73.Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

74. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2026 թվականի N 173-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ 154-Ա և 2025 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 178-Ա որոշումներով, հիմք ընդունելով Փարաքար համայնքի անապահով բնակիչների դիմումները, Փարաքար համայնքի ավագանու <<Կրթության, մշակույթի, սպորտի և այլ հարցերի>> մշտական հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 05-ի թիվ 29 որոշումը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով բնակիչներին տրամադրել 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ աջակցություն շինանյութի գնման համար՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման ու համակարգման բաժնին (Ք.Մելքոնյան)՝ կատարել համապատասխան ձևակերպում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ՖԱՐՖԱՐՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱՋ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՍՈՒՐԻԿ ՋԱՔԵՎՈՍՅԱՆ

ՕՆԻԿ ԱԽՎԵՐԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԵՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 16
գ. Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի
2026 թվականի հոկտեմբերի 16-ի N [illegible]-Ա

ՑՈՒՑԱԿ
ՇԻՆԱՆՅՈՒԹԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

N	Անուն, ազգանուն	Հասցե	Ընտանեկան վիճակը	ՀՀ դրամ
1.	Արմինե Հակոբյան	գ.Բաղրամյան, Բաղրամյան փողոց, տուն 60	Շահառուի ընտանիքը բաղկացած է 6 շնչից: Ընտանիքը բնակվում է բնակարանային բավարար պայմաններում: Սեպտեմբերի 5-ին թափառող շների հարձակումից խեղդամահ են եղել շահառուի հավերը:	100 000
2.	Ալվինա Խաչատրյան	գ.Բաղրամյան, Բաղրամյան փողոց, տուն 58	Շահառուի ընտանիքը բաղկացած է 4 շնչից: Շահառուի տղան 2-րդ խմբի զին հաշմանդամ է: Թափառող շների հարձակումից խեղդամահ են եղել շահառուի հավերը:	100 000
3.	Հովհաննես Մալքոյան	գ.Բաղրամյան, Թումանյան փողոց, տուն 14	Շահառուի ընտանիքը բաղկացած է 5 շնչից: Շահառուի դուստրը 3-րդ խմբի հաշմանդամ է: Շահառուն բնակվում է կոմունալ-կենցաղային անբավարար պայմաններում:	100 000
4.	Սեդա Խաչատրյան	գ.Մերձավան, Երևանյան խճղ., 63 շենք, բնակարան 38	Շահառուի ընտանիքը բաղկացած է 3 շնչից: Շահառուն բնակվում է բազմաբնակարան շենքի 5-րդ հարկում: Ուժեղ քամիների պատճառով վնասվել է տան տանիքը:	100 000
5.	Վեռա Մարիկյան	գ.Բաղրամյան, Այգեգործների փողոց, տուն 15	Շահառուն միայնակ կենսաթոշակառու է, բնակվում է կոմունալ կենցաղային բավարար պայմաններում: Փողոցում իրականացվող շինարարական աշխատանքների պատճառով վնասվել է շահառուի տան պարիսպը, ունի օգնության կարիք:	100 000
6.	Աննա Սարգսյան	գ.Բաղրամյան, Այգեգործների փողոց, տուն 17	Շահառուի ընտանիքը բաղկացած է 6 շնչից: Բնակվում են կոմունալ կենցաղային անբավարար պայմաններում: Փողոցում իրականացվող շինարարական աշխատանքների պատճառով վնասվել է շահառուի տան պարիսպը:	100 000
	Ընդամենը			600 000

Աշխատակազմի ղեկավար՝ Գ.Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2026 թվականի N 174-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԲՆԱԻՐԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ 154-Ա և 2025 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 178-Ա որոշումներով, հիմք ընդունելով Փարաքար համայնքի անապահով բնակիչների դիմումները, Փարաքար համայնքի ավագանու <<Կրթության, մշակույթի, սպորտի և այլ հարցերի>> մշտական հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 05-ի թիվ 28 որոշումը՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով ընտանիքի անդամներին ցուցաբերել բնաիրային աջակցություն 160 000 (հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2.Աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման ու համակարգման բաժնին (Ք.Մելքոնյան)՝ կատարել համապատասխան ձևակերպում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ՖԱՐՖԱՐՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱՋ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՂԱՋԱՐՅԱՆ

ՍՈՒՐԻԿ ՋԱՔԵՎՈՍՅԱՆ

ՕՆԻԿ ԱԽՎԵՐԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԵՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 16
գ. Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի
2026 թվականի հոկտեմբերի [illegible]-ի նիստի

ՑՈՒՑԱԿ

ԲՆԱԻՐԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

N	Անուն, ազգանուն	Հասցե	Ընտանեկան վիճակը	ՀՀ դրամ
1.	Սաթենիկ Կարապետյան	գ. Փարաքար, Երևանյան փողոց, տուն 52	Շահառուն բնակվում է աղջկա և թոռնիկի հետ միասին, վարձակալական հիմունքներով, կոմունալ կենցաղային անբավարար պայմաններում: Շահառուի աղջիկը և թոռնիկը 2026 թվականի սեպտեմբերի 7-ին ընկել են և կոտրել են ձախ սրունք-թաթային հոդը:	40 000
2.	Կարո Գևորգյան	գ. Փարաքար, Վաղարշապատի փողոց, տուն 29	Շահառուի ընտանիքը բաղկացած է 5 անձից: Շահառուն իր երեք անչափահաս երեխաների հետ միասին բնակվում է վարձակալած բնակարանում, կոմունալ կենցաղային անբավարար պայմաններում:	40 000
3.	Սոնա Մամյան	գ.Փարաքար, Մայրաքաղաքային 118/ա	Շահառուի ընտանիքը բաղկացած է 2 անձից: Շահառուն իր տղայի հետ միասին բնակվում է կոմունալ կենցաղային բավարար պայմաններում: Շահառուի ամուսինը մահացել է 2026 թվականի մայիսի 19-ին:	40 000
4.	Գեորգի Զաքարյան	գ.Մերձավան Երևանյան խճուղի, 2-րդ փողոց,2-րդ փակուղի, տուն 9/2	Շահառուն բնակվում է մայրիկի հետ միասին, բնակարանային բավարար պայմաններում: Շահառուի մայրը 2-րդ խմբի հաշմանդամ է, ունի հոգեկան առուղջության հետ կապված խնդիրներ, դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ:	40 000
		Ընդամենը		160 000

Աշխատակազմի ղեկավար՝ Գ.Մանուկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2026 թվականի N 175-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿՉԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ 154-Ա և 2025 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 178-Ա որոշումներով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Երևանյան խճուղի շենք 65 բնակարան 50 հասցեի բնակչուհի Յուլյա Գրիգորի Հայրապետյանի 2026 թվականի հոկտեմբերի 05-ի թիվ 6054 դիմումը, Փարաքար համայնքի ավագանու <<Կրթության, մշակույթի, սպորտի և այլ հարցերի>> մշտական հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 05-ի թիվ 30 որոշումը. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի <<Ինժեներական տնտեսագիտություն և կառավարում>> ֆակուլտետի <<Տնտեսագիտություն>> բաժնի առկա ուսուցման 2-րդ կուրսի ուսանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Երևանյան խճուղի շենք 65 բնակարան 50 հասցեի բնակչուհի Յուլյա Գրիգորի Հայրապետյանին ցուցաբերել ուսման վարձավճարի մասնակի հատուցում՝ 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին հանձնարարել իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ՖԱՐՖԱՐՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱՋ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՂԱՋԱՐՅԱՆ

ՍՈՒՐԻԿ ՋԱՔԵՎՈՍՅԱՆ

ՕՆԻԿ ԱԽՎԵՐԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԵՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 16
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հոկտեմբերի 2026 թվականի N 176-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հաշվի առնելով համայնքի վարչական ղեկավարների առաջարկությունները, ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1.Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ, Նորակերտ, Բաղրամյան, Արևաշատ գյուղերի սեփականություն հանդիսացող արխիվային փաստաթղթերը սեփականության իրավունքով փոխանցել Հայաստանի ազգային արխիվի Արմավիրի մարզային մասնաճյուղին, համաձայն NN 1,2,3 և 4 հավելվածների:

2.Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ՖԱՐՖԱՐՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ԼԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱՋ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՍՈՒՐԻԿ ՋԱՔԵՎՈՍՅԱՆ

ՕՆԻԿ ԱԽՎԵՐԴՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԵՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 16
գ. Փարաքար

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքարի [illegible] վարչականու
2026 թվականի հոկտեմբերի [illegible]-ի որոշման

№	Գործերի վերնագրերը /գ. Մուսալեռ/	Թվագրում (սկիզբ–վերջ)	Թերթերի քանակ	Ծանոթություն
1.	Տնտեսության հաշվառման №1գիրք, № 1-90	1991-1995թ.թ.	100 էջ	
2.	Տնտեսության հաշվառման № 2 գիրք, № 91-178	1991-1995թ.թ.	99 էջ	
3.	Տնտեսության հաշվառման № 3 գիրք, № 179-278	1991-1995թ.թ.	102 էջ	
4.	Տնտեսության հաշվառման № 4 գիրք, № 279-373	1991-1995թ.թ.	101 էջ	
5.	Տնտեսության հաշվառման № 5 գիրք, № 374-471	1991-1995թ.թ.	100 էջ	
6.	Տնտեսության հաշվառման № 6 գիրք, № 472-568	1991-1995թ.թ.	103 էջ	
7.	Տնտեսության հաշվառման № 7 գիրք, № 569-615	1991-1995թ.թ.	50 էջ	
8.	Տնտեսության հաշվառման № 8 գիրք, № 616-713	1991-1995թ.թ.	101 էջ	
9.	Տնտեսության հաշվառման № 9 գիրք, № 714-811	1991-1995թ.թ.	100 էջ	
10.	Տնտեսության հաշվառման №10գիրք,№ 812-880	1991-1995թ.թ.	99 էջ	Լրացված 71էջ
11.	Տնտեսության հաշվառման № 1 գիրք, № 1-99	1996-2000թ.թ.	100 էջ	
12.	Տնտեսության հաշվառման № 2 գիրք, № 100-198	1996-2000թ.թ.	100 էջ	

13.	Տնտեսության հաշվառման № 3 գիրք , № 199-299	1996-2000թ.թ.	100 էջ	
14.	Տնտեսության հաշվառման № 4 գիրք ,№ 300-400	1996-2000թ.թ.	100 էջ	
15.	Տնտեսության հաշվառման № 5 գիրք ,№ 401-498	1996-2000թ.թ.	100 էջ	
16.	Տնտեսության հաշվառման № 6 գիրք , № 498-597	1996-2000թ.թ.	100 էջ	
17.	Տնտեսության հաշվառման № 7 գիրք ,№ 598-698	1996-2000թ.թ.	100 էջ	
18.	Տնտեսության հաշվառման № 8,№ 699-799	2001-2005թ.թ.	100 էջ	
19.	Տնտեսության հաշվառման № 9 գիրք, № 800-832	2001-2005թ.թ.	100 էջ	Լրացված 34 էջ
20.	Տնտեսության հաշվառման այբբենական գիրք	2001-2005թ.թ.	81 էջ	Լրացված 27 էջ
21.	Տնտեսության հաշվառման № 1 գիրք, № 1-92	2001-2005թ.թ.	103էջ	
22.	Տնտեսության հաշվառման № 2 գիրք, № 93-185	2001-2005թ.թ.	99 էջ	
23.	Տնտեսության հաշվառման № 3 գիրք, № 186-283	2001-2005թ.թ.	102 էջ	
24.	Տնտեսության հաշվառման № 4 գիրք, № 284-380	2001-2005թ.թ.	102 էջ	
25.	Տնտեսության հաշվառման № 5 գիրք, № 381-479	2001-2005թ.թ.	101 էջ	
26.	Տնտեսության հաշվառման № 6 գիրք, № 480-579	2001-2005թ.թ.	101էջ	
27.	Տնտեսության հաշվառման № 7 գիրք, № 580-676	2001-2005թ.թ.	101էջ	
28.	Տնտեսության հաշվառման № 8 գիրք, № 677-770	2001-2005թ.թ.	100էջ	

29.	Տնտեսության հաշվառման № 9 գիրք, № 771-816	2001-2005թ.թ.	99էջ	Լրացված 48 էջ
30.	Տնտեսության հաշվառման այբբենական գիրք	2006-2010թ.թ.	79էջ	Լրացված 42 էջ
31.	Տնտեսության հաշվառման № 1 գիրք, № 1-94	2006-2010թ.թ.	102էջ	
32.	Տնտեսության հաշվառման № 2 գիրք, № 95-185	2006-2010թ.թ.	100էջ	
33.	Տնտեսության հաշվառման№ 3 գիրք, № 186-278	2006-2010թ.թ.	100էջ	
34.	Տնտեսության հաշվառման № 4 գիրք, № 279-374	2006-2010թ.թ.	99էջ	
35.	Տնտեսության հաշվառման№ 5 գիրք, № 375-469	2006-2010թ..թ	100էջ	
36.	Տնտեսության հաշվառման № 6 գիրք, № 470-563	2006-2010թ.թ.	99էջ	
37.	Տնտեսության հաշվառման № 7 գիրք, № 564-659	2006-2010թ.թ.	100էջ	
38.	Տնտեսության հաշվառման № 8 գիրք, № 660-751	2006-2010թ.թ.	100էջ	
39.	Տնտեսության հաշվառման № 9 գիրք, № 752-820	2006-2010թ.թ.	99էջ	Լրացված 71 էջ
40.	Տնտեսության հաշվառման այբբենական գիրք	2011-2015 թ.թ.	80էջ	Լրացված 45 էջ
41.	Տնտեսության հաշվառման № 1 գիրք, № 1-84	2011-2015 թ.թ.	100 էջ	
42.	Տնտեսության հաշվառման № 2գիրք, № 85-173	2011-2015 թ.թ.	100էջ	
43.	Տնտեսության հաշվառման № 3 գիրք, № 174-264	2011-2015 թ.թ.	100էջ	
44.	Տնտեսության հաշվառման № 4 գիրք, № 265-356	2011-2015 թ.թ.	100էջ	

45.	Տնտեսության հաշվառման № 5 գիրք, № 357-450	2011-2015 թ.թ.	100էջ	
46.	Տնտեսության հաշվառման № 6 գիրք, № 451-543	2011-2015 թ.թ.	100էջ	
47.	Տնտեսության հաշվառման № 7 գիրք, № 544-632	2011-2015թ.թ.	100էջ	
48.	Տնտեսության հաշվառման № 8 գիրք, № 633-722	2011-2015թ.թ.	101էջ	
49.	Տնտեսության հաշվառման № 9 գիրք, № 723-806	2011-2015թ.թ.	100 էջ	Լրացված 85 էջ
50.	Տնտեսության հաշվառման այբբենական գիրք	2016-2020թ.թ.	78 էջ	Լրացված 55 էջ
51.	Տնտեսության հաշվառման № 1գիրք, №1-82	2016-2020թ.թ.	101 էջ	
52.	Տնտեսության հաշվառման № 2գիրք, № 83-171	2016-2020թ.թ.	101էջ	
53.	Տնտեսության հաշվառման № 3 գիրք, № 172-253	2016-2020թ.թ.	99էջ	
54.	Տնտեսության հաշվառման № 4 գիրք, № 254-341	2016-2020թ.թ.	98էջէջ	
55.	Տնտեսության հաշվառման № 5 գիրք, № 342-432	2016-2020թ.թ.	103էջ	
56.	Տնտեսության հաշվառման № 6 գիրք, № 433-517	2016-2020թ.թ.	98էջ	
57.	Տնտեսության հաշվառման № 7 գիրք, № 518-605	2016-2020թ.թ.	98էջ	
58.	Տնտեսության հաշվառման № 8 գիրք, № 606-651	2016-2020թ.թ.	49էջ	
59.	Տնտեսության հաշվառման № 9 գիրք, № 652-696	2016-2020թ.թ.	49էջ	
60.	Տնտեսության հաշվառման № 10 գիրք, № 697-737	2016-2020թ.թ.	49էջ	
61.	Տնտեսության հաշվառման № 11 գիրք, № 738-784	2016-2020թ.թ.	100 էջ	Լրացված 50 էջ
62.	Համայնքի ղեկավարի /գյուղապետի/որոշում համայնքի հողատարածքների առանց գնման իրավունքի վարձակալության հատկացման վերաբերյալ	1997-1998թ.թ.	46 էջ	
63.	Համայնքի ղեկավարի որոշում	2010թ.	58 որոշում	Ընդամենը 65 էջ
64.	Համայնքի ղեկավարի որոշում	2011թ.	31 որոշում	Ընդամենը 43 էջ

65.	Համայնքի ղեկավարի որոշում	2012թ.	52 որոշում	Ընդամենը 109 էջ
66.	Համայնքի ղեկավարի որոշում	2013թ.	49 որոշում	Ընդամենը 88 էջ
67.	Համայնքի ղեկավարի որոշում	2014թ.	51 որոշում	Ընդամենը 92 էջ
68.	Համայնքի ղեկավարի որոշում	2015թ.	47 որոշում	Ընդամենը 93 էջ
69.	Համայնքի ղեկավարի որոշում	2016թ.	30 որոշում	Ընդամենը 31 էջ
70.	Համայնքի ղեկավարի որոշում	2017թ.	42 որոշում	Ընդամենը 71 էջ
71.	Համայնքի ղեկավարի որոշում	2018թ.	58 որոշում	Ընդամենը 97 էջ
72.	Համայնքի ղեկավարի որոշում	2019թ.	64 որոշում	Ընդամենը 139 էջ
73.	Համայնքի ղեկավարի որոշում	2020թ.	61 որոշում	Ընդամենը 102 էջ
74.	Համայնքի ղեկավարի որոշում	2021թ.	79 որոշում	Ընդամենը 121 էջ
75.	Համայնքի ղեկավարի կարգադրություն	2009թ.	26 կարգադրություն	Ընդամենը 30 էջ
76.	Համայնքի ղեկավարի կարգադրություն	2010թ.	123 կարգադրություն	Ընդամենը 119 էջ
77.	Համայնքի ղեկավարի կարգադրություն	2011թ.	82 կարգադրություն	Ընդամենը 91 էջ
78.	Համայնքի ղեկավարի կարգադրություն	2012թ.	83 կարգադրություն	Ընդամենը 93 էջ
79.	Համայնքի ղեկավարի կարգադրություն	2013թ.	49 կարգադրություն	Ընդամենը 63 էջ
80.	Համայնքի ղեկավարի կարգադրություն	2014թ.	42 կարգադրություն	Ընդամենը 48 էջ
81.	Համայնքի ղեկավարի կարգադրություն	2015թ.	95 կարգադրություն	Ընդամենը 96 էջ
82.	Համայնքի ղեկավարի կարգադրություն	2016թ.	112 կարգադրություն	Ընդամենը 120 էջ

83.	Համայնքի ղեկավարի կարգադրություն	2017թ.	33 կարգադրություն	Ընդամենը 41 էջ
84.	Համայնքի ղեկավարի կարգադրություն	2018թ.	30 կարգադրություն	Ընդամենը 38 էջ
85.	Համայնքի ղեկավարի կարգադրություն	2019թ.	21 կարգադրություն	Ընդամենը 29 էջ
86.	Համայնքի ղեկավարի կարգադրություն	2020թ.	18 կարգադրություն	Ընդամենը 26 էջ
87.	Համայնքի ղեկավարի կարգադրություն	2021թ.	28 կարգադրություն	Ընդամենը 35 էջ
88.	Ավագանու որոշումներ	2009թ.	11 որոշում	Ընդամենը 11 էջ
89.	Ավագանու որոշումներ	2010թ.	126 որոշում	Ընդամենը 189 էջ
90.	Ավագանու որոշումներ	2011 թ.	189 որոշում	Ընդամենը 206 էջ
91.	Ավագանու որոշումներ	2012թ.	87 որոշում	Ընդամենը 119 էջ
92.	Ավագանու որոշումներ	2013 թ.	77 որոշում	Ընդամենը 137 էջ
93.	Ավագանու որոշումներ	2014թ.	72 որոշում	Ընդամենը 157 էջ
94.	Ավագանու որոշումներ	2015թ.	23 որոշում	Ընդամենը 180 էջ
95.	Ավագանու որոշումներ	2016թ.	48 որոշում	Ընդամենը 299 էջ
96.	Ավագանու որոշումներ	2017թ.	94 որոշում	Ընդամենը 229 էջ
97.	Ավագանու որոշումներ	2018թ.	109 որոշում	Ընդամենը 292 էջ
98.	Ավագանու որոշումներ	2019թ.	111 որոշում	Ընդամենը 225 էջ
99.	Ավագանու որոշումներ	2020թ.	104 որոշում	Ընդամենը 197 էջ
100.	Ավագանու որոշումներ	2021թ.	118 որոշում	Ընդամենը 181 էջ
101.	Աշխատակազմի քարտուղարի հրաման	2009թ.	35 էջ	
102.	Աշխատակազմի քարտուղարի հրաման	2010թ.	105էջ	
103.	Աշխատակազմի քարտուղարի հրաման	2011թ.	104էջ	

104.	Աշխատակազմի քարտուղարի հրաման	2012թ.	93էջ	
